Հայ միջնադարյան գրականություն

ՖՐԻԿ

(1234 - 1315)

ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Բանաստեղծի իսկական անունը հայտնի չէ. Ֆրիկը նրա գրական անունն է. նշանակում է խանձված ցորեն:

Շատ քիչ բան է հայտնի Ֆրիկի կենսագրությունից: Ենթադրվում է, որ ծնվել է թաթար-մոնղոլական արշավանքների սկզբին (մոտ. 1234 - 1315):

Թերևս ծնունդով Արևելյան Հայաստանից էր: Եղել է աշխարհական: Հայրը ցանկացել է որդուն կրոնավոր դարձնել, հանձնել վանք, սակայն, ինչ-ինչ պատճառներով, Ֆրիկը հոգևորական չի դարձել և չի ստացել բարձր վանական կրթություն: Ժամանակակիցները զարմացել են, թե ինչպես բանաստեղծը, վանական կրթություն չստանալով, այդպիսի գեղեցիկ բանաստեղծություններ՝ «գոհար բաներ» է շարում: Նա ինքը պատասխանել է, թե իր բանաստեղծական ձիրքն աստվածատուր շնորհ է:

Ֆրիկի գրական ժառանգությունից երևում է, որ նա ունեցել է գրագիտության որոշակի մակարդակ: Ընթերցանության և կենսափորձի միջոցով ձեռք է բերել ամենատարբեր բնագավառներին վերաբերող հարուստ գիտելիքներ: Տիրապետել է պարսկերենին և հաղորդակցվել որոշ պարսիկ բանաստեղծների ստեղծագործությանը:

Ինչպես գրեթե բոլոր մեծ բանաստեղծներին, Ֆրիկին ևս ամբոխը ծաղրել է ու վատաբանել: Մի բանաստեղծության մեջ նկատի ունենալով իրեն և իր նմաններին՝ նա ցավով ասել է, թե ոսկու նման բանքեր ստեղծած մարդուն վատաբանում են՝ հայհոյելով...

Երիտասարդ տարիքում Ֆրիկն առևտրի շնորհիվ կուտակել է մեծ հարստություն, ունեցել բարեկարգ ու շքեղ տունուտեղ: Շուտով, սակայն, նա սնանկացել է և հասել ծայր աղքատության: Նրա հարստությունն անցել է մոնղոլ պաշտոնյաներին: Այդ մասին նա ինքը վկայել է. «Ժողովեցի շատ մի բարի՝ ըռզակ արի զինք թաթարի» (Ժողովեցի շատ բարիք՝ թողեցի դրանք թաթարին):

Պարտքերի մեջ խրվելով ՝ բանաստեղծը ստիպված գրավ է դրել անգամ որդուն և, ըստ երևույթին, անդարձ կորցրել է նրան: Նա ինքն էլ եղել է թանկ գնով գնված գերի-պարտապան: Ծեր հասակում գրած բանաստեղծություններից մեկում նա վկայել է, որ չունի ոչ մի հարազատ-բարեկամ, որ միայնակ է ու անօգնական...

Ֆրիկը մահացել է խոր ծերության մեջ, հավանաբար 14-րդ դարի սկզբներին:

ԱՆՎԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ի՞ՆՉ Է ՆՇԱՆԱԿՈՒՄ ՖՐԻԿ

Տասներեքերորդ դարում Հայկական Կիլիկիայում պայծառաշունչ մի բանաստեղծ էր ապրում: Մի օր հարկահանները չոքեցին նրա դռանը: Ամեն ինչ տվեց հարկի դիմաց՝ և՛ տուն, և՛ կալվածք, և՛ իր ու ինչք: Բայց պարտքը մարելու համար ունեցածը չհերիքեց: Եվ դաժան հարկահանները գրավ վերցրին նրա որդուն: Վերցրին ու տարան՝ Աստված գիտե, թե ուր: Եվ հայրը քիչ մնաց վշտից խենթանար:

Որդուն գտնելու հույսով բանաստեղծն սկսեց ոտքի տակ տալ Կիլիկիան: Ինքն իրեն երդվել էր, որ բերանը հացի կտոր չի դնի այնքան ժամանակ, մինչև չգտնի որդուն: Գյուղից գյուղ անցնելիս հաց չէր խնդրում: Երբեմն թեքվում էր դեպի արտերը: Ձեռք չէր տալիս ոչ մի բանի: Արտեզրերից՝ փշածածկ թփերի միջից, քաղում էր դեռահաս ու կաթոտ ցորենի հասկեր, փնջեր անում, խանձում կրակի վրա, եղի դարձնում ու սնվում դրանով: Եղին համեղ աղանձ է: Բայց բանաստեղծին թվում էր, թե արտեզրերին բուսած հասկերը դառն հատիկներ են ունենում: Եվ երբեմն որոմ էր խառնում ցորնահատիկներին, որ եղին դառնահամ լինի: Այդ ժամանակներում Կիլիկիայի հայերը եղիին՝ չխանձված դեռահաս ցորենին, ֆրիկ էին ասում: Եվ երբ բանաստեղծին հարցնում են, թե ինչ է իր անունը, նա պատասխանում էր.

- Առայժմ Ֆրիկ:

Ասում է ու բանաստեղծական տողով հավաստում իր անունը.

Ոչ ծլեմ, ոչ բուսանեմ,

Ձերդ զաղընձած սերմ եմ գերիս:

Իրեն համարում է աղանձած սերմ, որովհետև մնացել էր անզարմ: Բանաստեղծը այդպես էլ չգտավ իր որդուն և մարդկանց հիշողության մեջ անմահացավ Ֆրիկ անունով:

Հայկ Խաչատրյան, «Հացապատում»

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Ֆրիկը սկսել է ստեղծագործել 1280-ական թվականներից, շուրջ հիսունամյա հասակից մինչև ծերություն: Գրել է բանքեր՝ կրոնական, անձնական, խրատական, պատմական և սոցիալական թեմաներով: Կատարել է որոշ զրույցների բանաստեղծական մշակումներ: Հեղինակել է նաև հայրեններ:

Ֆրիկի գրեթե ողջ ստեղծագործության մեջ իշխում է կրոնական ոգին: Սակայն սա չի նշանակում, թե նա առավելապես կրոնական երգիչ է: Հակառակը, Ֆրիկի քերթվածները մեծ մասամբ ունեն աշխարհիկ բովանդակություն:

Ստեղծված քաղաքական ու սոցիալական պայմանների հետևանքով հայ հանրությունը հետադիմել էր, բարոյալքվել, կորցրել ջերմեռանդությունը, հեռացել Աստծուց: Ուստի բանաստեղծը, ժողովրդի մեջ բարեպաշտությունն արթնացնելու համար, հարկ է համարել վերստին արծարծել կրոնական թեման:

Ֆրիկը ևս իր կրոնական բանքերում գովերգում է մարդուն՝ զարմանալով, թե Արարիչը հողից «ինչ գոհար պատկեր է հորինել», «հոգի, իմացություն ու խելք պարգևել»:

Աստվածասիրությունն ու մարդասիրությունը կազմում են Ֆրիկի խրատական ստեղծագործության գաղափարական հիմքը: Նա իր մեծ նախորդների՝ Գրիգոր Նարեկացու և Հովհաննես Երզնկացու հետևությամբ ու ազդեցությամբ, պարզ լեզվով ու ոճով, պատկերավորման ուրույն միջոցներով ու գաղափարներով նոր կյանք է շնորհել կրոնական բանաստեղծությանը, այն դարձրել լայն հանրության սեփականություն:

Ֆրիկը բանաստեղծության մեջ լայնորեն կիրառել է անձնական մոտիվը: Անձնական բանաստեղծության հիմնական նյութն են հեղինակի անձն ու անձնական կյանքի հանգամանքները և դրանց հետ կապված նրա խոհերն ու հույզերը: Նման բանաստեղծության ծնունդը թելադրված է եղել իրականության ու գրականության աշխարհիկացման խորացմամբ: Այդ ժամանակ մարդը սկսում է արժևորվել նաև որպես անձնավորություն: Դա կարևոր երևույթ էր գրականության զարգացման ճանապարհին: Այդ ասպարեզում վճռական դեր է կատարել աշխարհական բանաստեղծ Ֆրիկը:

Անձնական բնույթի բանքերում ներկայացնելով իր ցավերն ու վշտերը՝ բանաստեղծը գրեթե ամբողջովին վերապատմում է իր կյանքը:

Իր գործած մեղքերը խոստովանելու համար բանաստեղծը երբեմն դիմում է ոչ թե Աստծուն, այլ ինքն իրեն, և նման «զրույցները» սեփական անձի հետ նրա խոսքը դարձնում են շատ ավելի տպավորիչ...

Ֆրիկի անձնական բնույթի բանքերում տեսնում ենք կենդանի մարդուն՝ իր տարաբնույթ հոգսերով, ցավերով, մտորումներով ու ապրումներով, իր ողբերգությամբ՝ արտահայտված մեծ բանաստեղծին հատուկ գրավիչ պատկերներով:

Հայ միջնադարյան խոհական-խրատական բանաստեղծության զարգացման մեջ ևս մեծ է Ֆրիկի կատարած դերը: Նրա այդ կարգի գործերում առկա է ինչպես անձնական մոտիվը, այնպես էլ կրոնական ոգին՝ քրիստոնեական բարոյախոսությունը: Այդուհանդերձ, այդ գործերը ևս առավելապես աշխարհիկ բանաստեղծություններ են: Դրանց մեջ բանաստեղծը դրվատում է բարությունը, աղքատասիրությունը, համբերությունը, խոնարհությունը և մի շարք այլ առաքինություններ, որոնց շնորհիվ մարդը հասնում է կատարելության:

Ֆրիկը իմաստությունն ու բարոյականությունը բարձր է դասում հարստությունից և մեղսագործ ու անգետ ունևորին հակադրում է արդար ու գիտուն ընչազուրկին: Նրա հայրեններից մեկում ասված է.

Աղքատ իմաստուն լաւ է,
քան զհազար անգէտ գանձաւոր...
մօտ յԱստուած արդար մ՚ լաւ է,
քան զհազար հարուստ մեղաւոր:

(Աղքատ իմաստունն ավելի լավ է, քան հազար անգետ գանձատերը... Աստծո համար մեկ արդարն ավելի լավ է, քան հազար հարուստ մեղավորը):

Ֆրիկը լայն հանրությանը խրատելու նպատակով բանաստեղծորեն մշակել է ժողովրդական զրույցներ, որոնք կոչել է «մասալ եւ առակ»: Դրանցից մեկում պատմվում է, թե ինչպես ավագ եղբայրը, ագահությունից ու նախանձից դրդված, ցանկանում է սպանել կրտսեր եղբորը, բայց այդ ժամանակ պատին շարված աղյուսներից մեկը մարդկային ձայնով հորդորում է նրան չգործել այդ ոճիրը, չդառնալ եղբայրասպան: Պարզվում է, որ այդ աղյուսը թրծված էր մի շատ հարուստ մարդու հողացած մարմնից, որից նախ կարաս են պատրաստել, ապա՝ աղյուս և դրել պատի մեջ այն դղյակի, որտեղ ապրում են եղբայրները: Աղյուսի վերածված մեծահարուստը, պատմելով իր կյանքը, համոզում է ավագ եղբորը՝ չսպանել իր հարազատին, քանի որ անցավոր է մուլք-հարստությունը («Էր կու մորթես զայդ քո եղբայրդ, այս անցաւոր մըլքիս համար»):

Ֆրիկի լավագույն գործերից է «Վասն Արղուն ղանին եւ Բուղային» («Արղուն ղանի և Բուղայի մասին») պատմական բանքը: Այստեղ նա պատկերում է մոնղոլ տիրակալ Արղուն ղանի դեմ կատարված դավադրությունը, որի կազմակերպիչն

էր միապետի խոշոր պաշտոնյաներից մեկը՝ Բուղան: Դավադրությունը ձախողվում է, և Բուղան ու մյուս դավադիրները մահապատժի են ենթարկվում: Ներկայացնելով այս իրողությունը, Ֆրիկը ժողովրդական վիպերգերի ոգով ու ոճով արտահայտում է իր ատելությունն այլացեղ իշխանավորների նկատմամբ և իր գոհունակությունը՝ նրանց արդար և արժանի պատժի համար:

Հայ բանաստեղծության մեջ Ֆրիկի բերած ամենամեծ նորությունը նրա գանգատական բանքերն են, որոնց մեջ արտահայտված են բանաստեղծի գանգատը, բողոքը, դժգոհությունը մարդկային ու հասարակական զանազան երևույթների հանդեպ:

Հիշարժան է քրիստոնյա ժողովուրդների անմիաբանությունը պարսավող բանքը: Հեղինակն այստեղ ցավով է նկատել, որ բոլոր քրիստոնյաները նահանջել են իրենց լուսավոր հավատից, որ նրանք համերաշխ ու միաբան չեն, ատում են միմյանց և անգամ երբեմն «զիրար կոտորեն»: Այդ պատճառով, ահա, այլակրոն ցեղերը, հատկապես մուսուլմանները, զորանում են և իշխում մեզ վրա:

Ֆրիկը մյուս քրիստոնյա ազգերից շատ ավելի պարսավում է իր ժողովրդի թերությունները՝ նպատակ ունենալով առավել համախումբ ու լուսավորված տեսնել հայությանը: Նա աղաչում է Աստծուն օտար լծից ազատագրել իր ժողովրդին՝ ողջ հալածված քրիստոնյա ազգերի հետ միասին: Բանաստեղծը նաև այն հույսն է փայփայում, թե Տերը հայության դառնությունները կվերածի քաղցրության և մեզ համար կբարձրացնի մի սուրբ թագավոր, որը կանի արդարադատություն, կհատուցի թշնամիներին...

«ԸՆԴԴԵՄ ՖԱԼԱՔԻՆ»

Գանգատական բանքերից երկուսի բուն թեման ճակատագիրն է, որին Ֆրիկն անդրադարձել է նաև իր որոշ այլ բանքերում: Նշանավոր է հատկապես «Ընդդեմ Ֆալաքին» բանքը՝ գրված հայրենի չափով:

Հին ժամանակներում ճակատագիրը հաճախ պատկերացվել է իբրև պտտվող երկինք՝ ֆալաք, կամ երկնային անիվ՝ չարխի-ֆալաք:

Ֆրիկը հավատացել է ճակատագրին, բայց ֆաթալիստ-ճակատագրապաշտ չի եղել: Նա Ֆալաք-ճակատագիրը համարել է Աստծո ստեղծածը, աստվածային նախասահմանություն: Այդպես է նա նշված բանքում՝ անձնավորելով, ներկայացրել ֆալաքին (կամ չարխին):

Բանքը կառուցված է որպես բանաստեղծի կամ նրա քնարական հերոսի և Ֆալաք-ճակատագրի երկխոսություն: Բանաստեղծը բողոքում է, որ Ֆալաքը

մարդու հանդեպ քմահաճ է ու փոփոխական. մերթ սահուն պտույտով բարեկամանում է մարդուն՝ շնորհելով նրան հաջողություն ու բարիքներ, մերթ թշնամանալով՝ ծռվում է, թեքվում է ձախ կամ ետ է դարձնում իր պտույտները: Նա մերթ ժպտում է, մերթ խեթ (խոլոր) աչքով է նայում մարդուն, և այդ ժամանակ սկսվում են վերջինիս ձախորդությունները.

Զով որ կու սիրես այսօր,
կու դընես ի յոսկի աթոռ,
վաղիւն երբ ձըգես յաչաց,
հաւսըրես հողոյն մոխրաւոր:

(Ում սիրում ես այսօր՝ դնում ես ոսկե աթոռին, վաղը, երբ նրան աչքից գցես, կհավասարեցնես հողին մոխրավոր):

Իր մաշկի վրա զգալով ճակատագրի ծանր հարվածները, բանաստեղծը ներկայացնում է Ֆալաքին իբրև մահվան պես անողոք, դաժան ու կործանարար ուժի, որ դաժանորեն պատժում է ոչ միայն մեղսագործ մարդկանց, այլև անմեղներին: Ավելին, շատ հաճախ նա քաղցր աչքով է նայում անարժաններին, վատերին, տգետներին և նեղում ու տանջում է արժանավորներին, լավերին, գիտուններին... ճակատագրի այդ վարքագծի հետևանքով ծնունդ է առնում սոցիալական անարդարությունը, և ըմբոստ բանաստեղծը համարձակորեն դատապարտում է ծուռ-անարդար ու մոլոր դատավոր Ֆալաքին: Վերջինս պատասխանելով՝ ուղղակիորեն ասում է, թե այդ անարդար դատավորն ընդամենը Աստծո կամքն է կատարում, անում է այն, ինչ Տիրոջ կամքով է նախասահմանված: Այս պատասխանից այլևս անզորանում է ճակատագրի դեմ ըմբոստացած բանաստեղծը, որն այդուհետ Ֆալաքի արածները համարում է ճիշտ ու տեղին և ընդունում, որ Աստված պատժում է մարդկանց իրենց մեղքերի համար և ամեն ինչ անում է կշռադատված: Բայց ասածն ասված է: Ֆալաքին ուղղված ծուռ-անարդար դատավոր և մյուս որակումներն ու կշտամբանքներն ուղղվել էին Աստծուն, որքան էլ հանդուգն բանաստեղծը հետո մեղա է եկել:

«Ընդդեմ Ֆալաքին» բանքում են զետեղված ֆրիկյան հետևյալ հանրահայտ տողերը հայ ժողովրդի վրա ծանրացած թաթար-մոնղոլական լծի վերաբերյալ

Հիմիկ դըժարեց բաներս,
որ թաթարն եղաւ թագաւոր,
զըրկեց զամենայն աշխարհս
ու զգողերն եդիր մեծաւոր...

(Հիմա ծանրացավ մեր վիճակը, որ թաթարը եղավ թագավոր, կեղեքեց մեր ամբողջ երկիրն ու գողերին դրեց մեծավոր):

Շարունակության մեջ բանաստեղծը լավատեսորեն այն համոզմունքն է հայտնում. որ Աստված ֆալաք-ճակատագրի միջոցով կտապալի նաև այդ թագավորին...

«ԳԱՆԳԱՏ»

Ֆրիկը հավատացել է, որ մարդուն լավ կամ վատ բախտը տրվում է ի վերուստ, դեռևս նրա սաղմնավորման ժամանակ: Այս կանխորոշումից էլ, ըստ նրա, ծնվում է անհավասարությունը: Դրան բանաստեղծը համակողմանիորեն անդրադառնում է «Գանգատ» անունով հայտնի նշանավոր գանգատական բանքում: Այստեղ արդեն բանաստեղծը դիմում է ոչ թե Ֆալաք-ճակատագրին, այլ ուղղակիորեն Աստծուն՝ Գերագույն Դատավորին: Նա իր զարմանք-հիացումն է հայտնում, թե ինչպես են մարդկային մեկ զույգից («մէկ Ադամ եւ յԵւայէ») ծնվել այդքան ազգեր ու լեզուներ: Այդ զարմանք-հիացման մեջ, թերևս, կա նաև որոշ տարակույս և հաստատապես՝ նաև դժգոհություն, քանի որ տարբեր լեզուներով խոսող ազգերը «մէկ մէկի ոչ հաւանին»:

Բանաստեղծը հիշատակում է բազմաթիվ ազգերի, որոնք ոչ միայն տարբեր լեզուներով են խոսում, այլև տարբեր կրոնների հետևորդներ են, և յուրաքանչյուրն իրեն մյուսից ավելի է կարևորում: Այստեղից էլ բխում են ազգամիջյան ընդհարումները:

Աստծո դեմ Ֆրիկի ուղղած առաջին դժգոհությունն, ուրեմն, վերաբերում է Տիրոջ ստեղծած ազգերի տարբերությանը, անհավասարությանը, միմյանց հանդեպ նրանց անհանդուրժողականությանը:

Նշանակալից է նաև Աստծուն ուղղված հաջորդ դժգոհությունը: Քրիստոսը խաչվեց «մէջ աշխարհի», բայց թույլ տվեց, որ իրեն խաչողները մնան, ապրեն աշխարհում, չպատժեց նրանց: Բանաստեղծն այդ պատճառով գրեթե ամոթանք է տալիս Արարչին... Նա դառնորեն գանգատվում է նաև, որ Աստված անտեսում է հայությանը, բոլոր ազգերի նախատինքին արժանացնում, և չնայած որ հայերը սուրբ խաչի երկրպագուներ են , այդուհանդերձ՝ «Կանք ի ձեռըս անօրինի, որք կու վարեն անգին գերի...»:

Մոնղոլական ծանր լծի տակ կքող հայության անամոք վիճակի խտացված պատկերներից հետո առավել արդարացի է հնչում բանաստեղծի ցասկոտ բողոքն Աստծո դեմ.

Եւ դու ներես յամենայնի
’ւ անտես առնես զմեզ ի վըշտի.
Տէր, ոչ խընդրես վըրէժ յայտնի,
ոչ ցուցանես ակն ամէնի:

(Եվ Դու ներում ես այդ ամենը և անտեսում ես մեզ վշտի մեջ. Տեր, վրեժ չես լուծում, չես սաստում բացահայտորեն):

Անամոք ցավի ու վիատության անզոր ճիչեր են հաջորդող տողերը.

Արդ, եթէ չեմք ինչ պիտանի,
եւ կամ չունիմք գործ ինչ բարի,
կամ քո սըրտիդ եմք ատելի,
որ չարարաք ըստ հրամանի,
նայ դու ջընջէ զմեզ մէկ հետի,
որ քո բարի սիրտըդ հանգչի:

(Արդ, եթե պիտանի չենք և չունենք գործեր բարի կամ ատելի ենք Քո սրտին, որ չհետևեցինք Քո պատվիրանին, ուրեմն Դու ջնջիր մեզ միանգամից, որ Քո բարի սիրտը խաղաղվի):

Բանաստեղծը դժգոհում է, որ Արարիչն անարդարացիորեն է բաշխել կյանքը մարդկանց միջև: Ընդ որում՝ անարդար է բաշխված ոչ միայն մարդու կյանքի տևողությունը, այլև զավակներ ունենալու հնարավորությունը. մեկն ունի բազում, մյուսը ոչ մի որդի...

Մարդկանց անհավասար են բաշխված նաև արտաքին, մարմնական, առողջական վիճակներն ու ունակությունները: Անարդար են տրված նաև ներքին, հոգեկան, բարոյական ու մտավոր ունակությունները: Եվ այս անհավասարությունը ծնում է նորանոր անարդարություններ. ուժեղը ճնշում է թույլին, սպանում է կամ գերում: Ծնունդ է առնում սոցիալական անհավասարությունը, որ Ֆրիկը ներկայացնում է հետևյալ հանրահայտ տողերում.

Մէկն ի պապանց պարոնորդի,
մէկն ի հարանց մուրող լինի,
մէկին՝ հազար ձի եւ ջորի,
մէկին՝ ո՛չ ուլ մի, ո՛չ մաքի,
մէկին՝ հազար դեկան ոսկի,

մէկին՝ ոչ փող մի պըղընձի,
մէկին՝ հազար հատ մարգարտի...

(Մեկը պապերից սկսած ազնվորդի է, մեկը նախնիներից սկսած մուրացկան է լինում, մեկին՝ հազար ձի և ջորի, մեկին ոչ մի ուլ, ոչ մաքի, մեկին՝ հազար դահեկան ոսկի, մեկին՝ ոչ մի մանրադրամ պղնձի, մեկին՝ հազար մարգարտահատիկ, մեկին՝ ոչ անգամ ուլունք ապակի...):

Ընդ որում՝ այս աղաղակող անհավասարությունը խարսխված է մեկը մյուսին զրկելու, հարստահարելու, հարամ-անարդար գործեր անելու վրա...

Եվ այս ամենի սահմանողն Ինքը՝ Աստվածն է, Որն անողորմ ուժեղի և անարդարի կողմն է: Դիմելով Տիրոջը՝ աստվածամարտ բանաստեղծը, դարձյալ իրեն բնորոշ պատկերավոր լեզվով, համարձակորեն մեղադրում է Նրան...

Ֆրիկից առաջ սոցիալական թեման առակագրության մեջ արծարծել էին Մխիթար Գոշն ու Վարդան Այգեկցին: Սակայն այդ թեման Ֆրիկը բանաստեղծորեն մշակել է առավել սուր հարցադրումներով, ավելի խոր ու լայն: Միաժամանակ դժգոհել է Աստծուց՝ մարդկության ու հասարակության մեջ և իր հարազատ ժողովրդի կյանքում տիրող անարդարությունների համար:

«Գանգատ»-ի մեջ դրսևորվել է Աստծո դեմ ընդվզման մի այնպիսի ոգի, որպիսին չկա միջնադարյան որևէ այլ գրականության մեջ: Այսուհանդերձ, Ֆրիկի աստվածամարտությունը աստվածամերժություն չէ ամենևին: Նա ճշմարիտ քրիստոնյա էր, ջերմեռանդ հավատացյալ, մեծ աստվածասեր և աստվածավախ: Նրա ըմբոստությունն առավելապես բխել է նրա ջերմ մարդասիրությունից ու ազգասիրությունից, և նա Աստծո հետ խոսում է ինչպես որդին սիրելի, բայց անարդար հոր հետ՝ նպատակ ունենալով մարդկությանը՝ ընդհանրապես, և իր ժողովրդին՝ մասնավորապես, տեսնել երջանիկ, տեսնել չարը պատժված և բարին հաղթանակած:

Այսպիսով՝ Ֆրիկի ստեղծագործության կենտրոնում Աստծո կողքին հայտնվում է նաև մարդը՝ հաճախ հայ մարդու կերպարով:

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԸ

Ֆրիկն առաջինն ինքն է գնահատել իրեն որպես բանաստեղծ: Նա իր լեզուն համարել է բլբուլ, ճարտար և ասել է, որ լավ է չափաբերել իր բանքերը՝ դրանք համարելով գոհարներ, մարգարիտներ ու ծաղիկներ:

Ստեղծագործական աստվածային շնորհը միշտ չէ, որ դրսևորվել է բանաստեղծի մեջ. այն, ըստ Ֆրիկի, ի հայտ է գալիս, երբ հստակվում է նրա մտածումը, ծաղկում են միտքն ու հոգին և ցանկալի պտուղ տալիս. «Երբ կու ծաղկի միտքս ու հոգիս, լեզուս իմ հա՛նց պըտուղ կու տայ»:

Բանաստեղծի խոստովանությամբ՝ իր ստեղծագործություններն իբրև «խորհրդով դրախտ» (խորհրդանշական դրախտային պարտեզ) է տնկել և անչափ տքնել է՝ այն մշակելու համար...

Ֆրիկն ինքը վկայել է նաև, որ գրել է պարզ ու մեկին լեզվով ու ոճով՝ լայն հանրությանը հասկանալի լինելու համար. «Ֆըրիկն հանցեղ պարզ է խօսել, որ ամենայն մարդ իմանայ»:

Բանաստեղծը հաճախ է դիմում ժողովրդական խոսքարվեստին: Նա առածասացվածքների նմանությամբ ու ոգով կերտել է բազում թևավոր իմաստալից տողեր ու տներ: Դրանց մեջ խտացված կերպով արտահայտվում է հեղինակի բուն գաղափարը կամ խրատը՝ մեծ մասամբ իբրև բարոյախոսական եզրակացություններ...

Բանքերում առկա են նաև կենդանի երկխոսություններ, ժողովրդական ավանդավեպերին բնորոշ պատմելաձև, զրջական ու ցավագին հարցումներ, որոնց պատասխանները հասկանալի են, ինչպես. «Ո՞ւր են թագաւորք երկրի կամ իւրեանց գանձն ի պահեստի...»:

Հեղինակը մտերմորեն զրուցում է իր ընթերցողների հետ՝ որպես իր եղբայրների կամ որդիների, կամ էլ՝ ի խրատ հանրության, դիմում է իր անձին...

Բանաստեղծը կիրառել է ինչպես ավանդական, այնպես էլ բազում ինքնաստեղծ փոխաբերություններ ու համեմատություններ: Ահա թե ինչպիսի փոխաբերությամբ է նա իր հայրեններից մեկում խրատում խոնարհ լինել.

Մըտիկ լեռներո՛ւն արա.
խելօքնուն ասած մասալ է.
ուր բարձըր լեռ՝ հոն ձիւն գայ,
ուր ցած է, ինչպէ՞ս կանաչ է:

(Լեռների՛ն նայիր. գիտունների ասացվածք է. որտեղ բարձր է լեռը, այնտեղ ձյուն է գալիս, որտեղ ցածր է, ինչքա՛ն կանաչ է):

Ֆրիկը ժառանգել ու զարգացրել է ազգային բանաստեղծության ավանդույթները՝ ստեղծելով նոր գաղափարական-գեղարվեստական որակի բանաստեղծություն: Դրանով է պայմանավորված նրա բարերար ազդեցությունը հետագա հայ քնարերգության վրա:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ո՞վ է Ֆրիկը և ի՞նչ գրական ժառանգություն է թողել հայ գրականության մեջ:
2. Անձնական ի՞նչ ողբերգություն է ապրել Ֆրիկը և ինչո՞ւ է անվանվել Ֆրիկ:
3. Պատմական ի՞նչ ժամանակաշրջանում է Ֆրիկը գրել իր բանաստեղծությունները:
4. Ի՞նչ թեմաներով է ստեղծագործել բանաստեղծը:
5. Ի՞նչ արժեք ունեն Ֆրիկի խրատական տաղերը:
6. Տաղերգուն իր գրվածքներում ինչպե՞ս է արտահայտել ազգային և սոցիալական բողոքը:
7. Ի՞նչն է Ֆրիկի քնարական հերոսների հոգեկան խռովքի պատճառը:
8. Ինչի՞ց է երևում, որ բանաստեղծն ապրել է անձնական ողբերգություն: Կարծիքդ հիմնավորի՛ր հեղինակի անձնական բնույթի բանքերից բերված օրինակներով:
9. Կենսագրությունից ելնելով՝ գնահատե՛ք Ֆրիկի կյանքն ու ստեղծագործությունը նրա ապրած ժամանակաշրջանի համատեքստում:
10. Արտահայտե՛ք սեփական կարծիք Ֆրիկի կյանքի մասին և նրա կյանքի պատմությունը կապեք իրականության և ժամանակաշրջանի անցուդարձի հետ:
11. Ներկայացրե՛ք բանաստեղծի գրական կերպարը՝ ելնելով գրողի ստեղծագործություններից ստացած տպավորություններից: Ներկայացրե՛ք սեփական դիրքորոշումը:
12. Տեղեկություններ հավաքեք գրողի ապրած ժամանակաշրջանի, նրա գրական գործունեության և հասարակական-քաղաքական իրավիճակի մասին:
13. Ֆրիկի ստեղծագործությունները համեմատե՛ք պանդխտության հայրենների հետ, գտե՛ք նմանություններն ու տարբերությունները:
14. Ներկայացրե՛ք «Գանգատ» բանատեղծության մեջ բանաստեղծի արծարծած խնդիրները:
15. «Գանգատ» բանաստեղծությունից դո՛ւրս գրեք անարդարությունները նկարագրող հակադրությունները:
16. Պատմության դասագրքից կարդացե՛ք թաթար-մոնղոլական տիրապետության շրջանի հայ իրականությանը վերաբերող հատվածը և համեմատե՛ք Ֆրիկի «Գանգատի» հետ:

17. Ներկայացրե՛ք հեղինակի «Ընդդեմ Ֆալաքին» բանաստեղծության մեջ արծարծած խնդիրները:
18. Հիմնավորե՛ք «Ընդդեմ Ֆալաքին» բանաստեղծության արդիականությունը՝ բերելով օրինակներ:
19. Դո՛ւրս գրեք բանաստեղծության մեջ գործածված պատկերավորման միջոցները և դրանք գործածե՛ք գրավոր շարադրանքում:
20. Պատրաստե՛ք սահիկաշար՝ Ֆրիկի կյանքի և ստեղծագործության վերաբերյալ: